

Խնդրահարույց վարկերի վերակառուցման պայմաններ

1. Հիմնական պայմաններ

1.1	Հասանելի վերակառուցման տեսակներ	Գործող ժամկետի շրջանակներում ժամանակացույցի փոփոխություն ²	Ժամկետի երկարաձգում (այդ թվում նաև սույն պայմանների ² համարակալումով նշված պայմաններին չբավարարելու դեպքում)
1.2	Ժամկետանց օրերի նվազագույն քանակ		90 օր
1.3	Ժամկետանց օրերի առավելագույն քանակ		Չի սահմանվում
1.4	Վարկի մայր գումարի գծով իրականացված մարումների չափ	Համաձայն Բանկի ներքին պայմանների	
1.5	Տոկոսադրույքի փոփոխություն	Անփոփոխ	
1.6	Վարկի ամսական սպասարկման վճար	-	վարկի պայմանագրային գումարի 0.2% ³
1.7	Վարկի վերակառուցման միանվագ վճար	40,000 ՀՀ դրամ ⁴	40,000 ՀՀ դրամ
1.8	Երկարաձգման առավելագույն ժամկետ	-	Առավելագույնը 180 ամսով
1.9	Որոշման կայացման պահին Բանկում առկա ամբողջ պարտավորության (դեբիտորական պարտքեր, վարկի տոկոսի տույժ, տուգանային տոկոս, սպասարկման վարձեր, տոկոսագումար, մայր գումար) գծով նվազագույն մարում	-	Համաձայն Բանկի ներքին պայմանների
1.10	Պայմանագրային գումարի փոփոխություն	Վարկի գծով առկա բոլոր տեսակի ժամկետային և ժամկետանց պարտավորությունները (այդ թվում նաև Բանկի կողմից ժամկետանց պարտավորության հետստացմանն ուղղված միջոցառումների գծով իրականացված ծախսերը) ավելացվում են վարկի մայր գումարին	
1.11	Մայր գումարի և տոկոսագումարների մարման կարգ	Մինչև գործող պայմանագրի վերջնաժամկետը միայն տոկոսագումարների ամսական մարումներ, որից հետո, վարկի երկարաձգման դեպքում՝	Ամսական հավասարաչափ (անուփոփոխ)

		տոկոսագումարների և մայր գումարի ամսական հավասարաչափ	
2. Վարկառուին, նրա վարկային պատմությանը և եկամուտներին ներկայացվող պահանջներ			
2.1	Հաճախորդի տարիքը	Վարկի վերջնաժամկետին վարկառուի տարիքը չի կարող գերազանցել 70 տարեկանը	
2.2	Վարկային պատմության նկատմամբ պահանջներ	Չի սահմանվում	
2.3	Առավելագույն չափահովված պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Չի սահմանվում	
2.4	Եկամուտների նկատմամբ պահանջ	Համարվում է բավարար մարման նվազագույն չափի մուտքագրման դեպքում	
3. Պայմանագրի փոփոխությունների իրականացում			
3.1	Գործող պայմանագրի փոփոխության անհրաժեշտություն	Համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի	
4. Փաստաթղթերի ներկայացում և որոշման կայացում			
4.1	Փաստաթղթերի ներկայացման ժամկետ	Հայտի ընդունման օրվանից սկսած առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում	
4.2	Մարման նվազագույն չափի մուտքագրման առավելագույն ժամկետ (որոշման կայացումից հետո)	-	30 օր, ընդ որում հայտի ընդունմանը նախորդող 10 օրվա ընթացքում իրականացված մարումը ևս համարվում է բավարար
4.3	Որոշման կայացման ժամկետ	Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում	
4.4	Որոշման վավերության ժամկետ	Որոշման կայացումից հետո 30 օր	
4.5	Վարկի վերակառուցման ձևակերպման ժամկետ	Ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում (5 աշխատանքային օր գրավի պայմանագրի փոփոխման դեպքում)	
5. Այլ պայմաններ և դրույթներ			

5.1	Վարկի դասակարգման մոտեցումներ	Վարկը դասակարգվում է «ոչ ստանդարտ» ռիսկի դասով, սակայն ոչ ավելի ցածր, քան վերակառուցման պահին հաճախորդի ռիսկի դասն է, 3 ամիս առանց ժամկետանցումների մայր գումարի և տոկոսագումարների գծով մարում իրականացնելու դեպքում «ստանդարտ» դասի վերականգնելու պայմանով
5.2		Վարկի հաջորդ մարման ամսաթիվ սահմանել համաձայնագրի ստորագրման ամսաթվից առնվազն 30 օր հետո՝ ժամանակացույցով նախատեսված հերթական մարման ամսաթիվը:
5.3		Ժամկետի երկարաձգման դեպքում Բանկի գործառնական օր համակարգում փոփոխություններն իրականացվում են համաձայնագրերի կնքման օրը՝ նախքան գրավի պետական գրանցումը
5.4	Գրավի գնահատում	Չի պահանջվում
5.5	Գրավի գրանցման ծախսեր	Գրավի պետական գրանցման (վերագրանցման) հետ կապված ծախսերը կատարվում են Բանկի հաշվին, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքը հաճախորդը ցանկանում է գրանցել օրենքով նախատեսված ստանդարտ ժամկետներից արագացված կարգով

6. Վերակառուցման իրականացման սահմանափակումներ

¹ Հիփոթեքային վարկերի մեջ ներառվում են նաև կառուցապատման և վերանորոգման վարկերը: Ընդ որում, կիրառելի է միայն վերակառուցման պահին Բանկի ռեսուրսով տրամադրված կամ տեղափոխված վարկերի վրա:

² Ժամանակացույցի փոփոխության դեպքում վարկի մարման ժամկետի ավարտը պետք է առնվազն հայտի ընդունման ամսաթվից 6 ամսից ավել լինի և տվյալ պահին առկա պարտքը չգերազանցի գործող պայմանագրով առկա պայմանագրային գումարը: Ընդ որում, սույն պայմանների 1.11 կետով սահմանված պայմանի պահպանման դեպքում վարկի ժամկետը հաճախորդի դիմումի համաձայն կարող է երկարաձգվել սույն պայմաններով սահմանված եղանակով:

³ Պայմանագրային գումարի մեջ ներառվում են նաև կուտակված տոկոսագումարները (այդ թվում՝ ժամկետանց և/կամ ժամկետային, ժամկետանց վարկի դիմաց հաշվարկված տոկոսները, ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժերը), այլ պարտավորությունները և Բանկի կողմից խնդրահարույց վարկի հետստացմանն ուղղված միջոցառումների դիմաց իրականացված ծախսերը:

⁴ Սույն կետի շրջանակներում համաձայնագրերի նոտարական վավերացում իրականացվում է միայն հաճախորդի կողմից համաձայնագրով սահմանված նոր ժամանակացույցի տրամադրումից հետո 3 ամիս առանց ժամկետանցման (ժամկետանցում է համարվում, եթե երկարաձգման հայտի ներկայացման պահին հաճախորդի վարկի մայր գումարի կամ տոկոսագումարների գծով ժամկետանց գումար է առկա) մարումներն իրականացնելուց հետո վարկի ժամկետի երկարաձգման դեպքում: Ընդ որում, 1.7 կետով սահմանված միջնորդավճարը ենթակա է գանձման, եթե ժամկետի ավարտից հետո իրականացվում է վարկի երկարաձգում: